

ՈՒՍՏԱ-ԹԱԹՈՍՆ ՈՒ ՍԱՏԱՆԱՆ

Ա. 2 Ե Խ Ո Վ Ի

(Ժննդեան պատմութիւն)

Ծննդեան նախօրէքն էր: Մարիամ տուտուն վաղուց էր խոսկացնում. ճրագը մարելու վրայ էր, իսկ ուստա Թաթոսը դեռ նստած աշխատում էր: Նա վաղուց գործն էլ թողած, փողոց էլ դուրս եկած կլինէր, եթէ Ժամհարենց փողոցում ապրող մուշտարու բանը չլինէր, որ երկու շաբաթ առաջ պատուիրել էր կոշիկ երեսն ու ձիտքը ձգէ. հէնց երէկ էր, որ նորից եկաւ հայհոյեց և պատուիրեց որ կոշիկներն անպատճառ պատրաստ լինին մինչև առաւօտեայ ժամի ժամանակը:

—Սեանք խօսմ չէ, շան չարչարանք է, փնթփնթում էր քթի տակին ուստա-Թաթոսը: Հետն էլ բան անելով—Հիմա մէկը բնել է, մէկէլներն իրենց քէֆի ման են դալիս, իսկ դու, ուստա-Թաթոս, արի էստեղ նստիր, Սայէնի անէծք քաշողի նման, մէջքդ կուզ արա, երկուտակիր՝ նստիր, թէ ինչ է ստանի համար բան ես կարում...

Որպէս զի յանկարծակի բունը չտանէր, նա հէնց այն է, ձեռքը տանում սեղանի տակին շիշը հանում ու դլիին էր քաշում. և ամեն մի կումից յետոյ գլուխը Թափհարում և բարձրաձայն խօսում էր ինքն իրեն.

—Սխր, մի ասէք ես էլ իմանամ, ինչ հօրս ցաւին ես էստեղ նստած ըից ու մախաթիս պիտի զօռ տամ, իսկ իմ աղա մուշտարին ձեռները մէջքին դրած իր քէֆին պիտի ման գայ: Նորա համար որ նորա ջիրումը փող կայ, իսկ խեղճ ուստա-Թաթոսը աղքատ է...

Նա ատում էր բոլոր պատուէր տուողներին, իսկ ամենից աւելի նորան, որ ապրում էր Ժամհարենց փողոցում: Դա մի գաժան դէմքով, երկար մազերով, դեղնած երեսով, մեծ-մեծ

կապոյտ ակնոցներով և խոպոտ ձայնով մարդ էր: Ինչ որ գերմանական ազգանուն ունէր, մի այնպիսի անուն, որ մարդու լեզու կկոտորուէր մինչև արտասանէր: Ինչ մարդ էր, ինչով էր պարագում, ինքը ստատան էլ չգիտէր: Երբ երկու շարաթ առաջ ուստա-Թաթոսը նորա մօտ էր գնացել, որ ոտի չափան առնէ, նա նստած էր եղել գետնին ու ինչ որ բան էր ծեծում սանդի մէջ: Հաչիւ էր բարեկէլ խեղճ ուստա-Թաթոսը, որ յանկարծ սանդի մէջ եղածը բռնկուեցաւ, բաց-կարմիր բոց արձակեց, ծծումբի և պրուած փետրի հոտ հանեց և սենեակը լցրեց թանձր, վարդագոյն ծխով, այնպէս որ ուստա-Թաթոսը գետ մի հինգ-վեց անգամ էլ փոշտաց և այդ բոյորը տեսնելուց յետոյ երբ որ տուն էր վերադառնում, ինքն իրեն մրտածում էր. «Ով Աստծուց վախենում է, այդպիսի բաներով չի զբաղուիլ»:

Երբ շշի մէջ այլ ևս բան չմնաց, ուստա-Թաթոսը կռ շիկները վար դրեց ու մաքրերի ծոփն ընկաւ: Նա բուռնցքները դէմ տուեց ծանրացած գլխին ու սկսեց իւր խեղճութեան մասին մտածել, իւր խեղճ ու կրակ, խաւար կեանքը քննել, յետոյ հարուստների, նոցա մեծամեծ տների, հարիւրանոցների մասին... Ա՛յ, ինչ լաւ բան կլինէր, որ այդ,—այ ստատանէն խոով կենայ նրանց գլխին,—հարուստների տները բանդուէր, ձիերը սատկոտէին, տաք-տաք մուշտակները և մորթէ գլխարկները ցից ընկներ, քրքրուէր: Ինչ լաւ բան կլինէր, որ այդ հարուստները հետզհետէ աղքատանային, որ ուտելու հաց էլ չունենային, իսկ խեղճ կոշկակարներն ու փինաչիները հարստանային, իսկ ինքն էլ մի իրա շիգրը հանէր մի խեղճ կոշկակարից, նորա առջին հարբա-գօրբա անէր ծննդեան նախօրէքին: Այսպիսի երազների աշխարհ ընկած բոպէին ուստա-Թաթոսը յանկարծ մտաբերեց իւր գործը և աչքերը բաց արեց:

«Ա՛յ քեզ առաքոց,—մտածում էր նա ինքն իրեն ու կօշիկները անդրում.—գործս վաղուց եմ վերջացրել, իսկ գետ նստել-սպասում եմ: Տանեմ տիրոջը տամ»:

Պօշիկները փաթաթեց մի կարմիր թաշկինակի մէջ, հագնուեցաւ և դուրս եկաւ փողոց: Մանր, կոշտ ձիւն էր գալիս. այնքան կոշտ, որ մարդու երես էր ծակծկում: Յուրտ էր, լըպրծուն, մուժ, լապտերները աղօտ յուսաւորում էին և ինչ որ նաւթի հոտ էր կանգնել ամբողջ փողոցում, այնպէս որ ուստա-Թաթոսն սկսեց փոնգտալ ու հազալ: Փողոցի մէջ տեղով կառ-

քերով հարուստները դէս ու դէն էին գնում. իւրաքանչիւր հարստի ձեռքին կար ապխտի մի մեծ կտոր և օղու շիշ, կաթերից և սահնակներից հարուստ օրիորդներն ու տիկիները նայում էին ուստա-Թաթոսին, լեզու էին հանում և ծիծաղով կա'չում:—

—Աղբա՛տ, աղբա՛տ:

Ուստա-Թաթոսի յետեից գնում էին ուսանողներ, զինուորականներ, վաճառականներ և զօրապետներ ու նորան ծաղրում էին ու վիրաւորում:

—Հարա՛ն, հարա՛ն: Անաստուած պօլօղ-փափախ, Սատանի սաղմոս: Աղբա՛տ: Փինաչի՛ Սատանի օրացոյց:

Այս բոլորն, իհարկէ, վերին աստիճանի վիրաւորական, բայց ուստա Թաթոսը լսում էր և կամացուկ թքում, անցնում: Իսկ երբ պատահեց Գիւմրլըցի կոշիկար քօ-Մաթոսը և ասաց. — Էս հարուստ կնիկ առայ, քարգահները սաղ օրը բանեն կը, ամա դու կենէ էն աղբատը մնացիր, ուտելու բիլա հաց չունիս: Եւս հարուստ կնիկ առայ, քարգահները սաղ օրը բանեն կը, ամա դու կենէ էն աղբատը մնացիր, ուտելու բիլա հաց չունիս: Եւս հարուստ կնիկ առայ, քարգահները սաղ օրը բանեն կը, ամա դու կենէ էն աղբատը մնացիր, ուտելու բիլա հաց չունիս: Եւս հարուստ կնիկ առայ, քարգահները սաղ օրը բանեն կը, ամա դու կենէ էն աղբատը մնացիր, ուտելու բիլա հաց չունիս: Եւս հարուստ կնիկ առայ, քարգահները սաղ օրը բանեն կը, ամա դու կենէ էն աղբատը մնացիր, ուտելու բիլա հաց չունիս:

—Աղա-ջան, հրամանոցդ կօշիկները բերի, ասաց ուստա-Թաթոսը՝ յօնքերը կիտած:

Պատուէր տուողը տեղիցն ելաւ և և լուռ ու մունջ սկսեց փորձել կօշիկները: Կամենալով օգնել նորան, ուստա Թաթոսը չորեք մի ծնկան վրայ և հին կօշիկը քաշեց, հանեց, բայց հէնց նոյն ըոպէին սարսափից վարհուրած տեղից վեր թռաւ ու դէպի դուռը քաշուեց յետ-յետ: Պատուէր տուողի ոտքը մարդու ոտք չէր, այլ ձիու սմբակ:

ԸԼՏՐ, — մտածեց ուստա-Թաթոսը: Առ քեզ բա՛ն:

Ուստա-Թաթոսի առաջին գործը պիտի լինէր, իհարկէ, երեսին խաչ հանէր, յետոյ ամեն բան թողնէր ու փախչէր: Բայց իսկոյն գլխի ընկաւ, սր երեւի իւր կեանքի մէջ առաջին ու վերջին անգամ է պատահում սատանայի և չօգտուել նորանից,

անշուշտ, վերին աստիճանի յիմարութիւն կլինէր: Նա մի կերպ զօր արեց ինքն իրեն և վճռեց իւր բաղադր փորձել: Չեռները յետև գնեցով, որ բան է, յանկարծ, երեսը խաչ չհանէ, նա յարգանքով հազադ և սկսեց.

—Ասում են, որ աշխարհումս ստատանայից աւելի վատ և մուռտառ բան չկայ, իսկ ես այնպէս եմ կարծում, ձերդ բարեձննդութիւն, որ ստատանան ամենից խելօքն է: Ստատանէն, կներէք աղա-ջան, սմբակ ու պոչ ունի, բայց դորա փոխարէն գլխունն աւելի խելք կայ, քան ամենախելօք ուսանողի գըլխումը:

—Մյ, ինչ կասեմ խելօք խօսքին, ճակատդ պիտի համբուրել,—ասաց քէֆն եկած պատուէր առողը: Հնորհակալութիւն, կոշկակար: Ի՞նչ կուզես:

Եւ կոշկակարն, առանց ժամանակ կորցնելու, սկսեց իւր բաղադր գանգատուել: Նա սկսեց պատմել, թէ ինչպէս հէնց մանկութիւնից միշտ նախանձել է հարուստներին: Նորա համար վիրաւորական էր, որ բոլոր մարդիկ առանց խորութեան մեծ-մեծ, փառաւոր տներում չեն ապրում և պատուական ձիաներով չեն պատում: Մէկը մի հարցնէ՝ թէ ինչո՞ւ ես խեղճ եմ: Ինչո՞վ պակաս եմ Գիւմրբքի քօռ-Մամոսից, որը սեփական տուն էլ ունի, կիմն էլ գլխարկով է ման գալիս: Իւր բիթն էլ նոյն տեսակ է, ձեռքերն էլ, ոտքերը, գլուխը, մէջքն էլ այնպէս է, ինչպէս որ հարուստներինը, ուրեմն ինչո՞ւ ինքը պիտի աշխատի, իսկ ուրիշներն իրենց քէֆին պատեն: Ինչո՞ւ նա պատկուած է Մարիամ-առուտուի հետ, և ոչ թէ մի տիկնոջ հետ, որից անուշ հոտեր են գալիս: Հարուստների տներում, երբ իրեն կանչում են որ և է պատուէր տալու, նա շատ անգամ է տեսել սիրուն, գեղեցիկ օրիորդներ, բայց նորա իւր վերայ ուշագրութիւն անգամ չեն դարձրել, իսկ դորա փոխարէն, երբեմն ծիծաղացել են վրէն ու իրար ականջի փսփսացել,—«Ի՞նչ կարմիր բիթ ունի այս կոշկակարը: Ծճմարիտ է, Մարիամը բարի, լաւ, աշխատաւոր կին է, դորան խօսք չկայ. բայց չէ՞ որ նա անկիրթ է, ձեռքն էլ բաւական ծանր է, երբ մէկ-մէկ կպցնում է. իսկ եթէ երբեմն-երբեմն մարդ բաղադրականութիւնից կխօսիկամ մի խելօք բանի մասին խօսք բաց կանի, այն ժամանակ նա մէջ կընկնի և այնպիսի երևելի յիմարութիւն կասի, որ էլ ի՞նչ ասես:

—Ի՞նչ ես ուզում ուրեմն, խօսքը կտրեց պատուէր տուողը:

—Ես կուզենայի, ձերդ բարեծննդութիւն, աղա Սատանայ, թէ որ արժան կհամարես, ինձ հարուստ մարդ շինես:

—Շատ լաւ, աչքիս վրայ: Բայց, խօս գիտես, դորա տեղ հօգիդ ինձ պիտի տաս: Քանի արյունները դեռ չեն կանչել, առ գնա այս թղթի վրայ ստորագրիր, որ հօգիդ իմս է:

—Ձերդ բարեծննդութիւն,—ասաց ուստա-Թաթոսը խոնարհութեամբ ու քաղաքավարութեամբ.—Երբ դուք ինձ պատուէր տուեցիք, ես խօս ձեզինից փողն էս զլեկից չառայ: Առաջ պէտք է պատուէրը կատարել և յետոյ փողն ստանալ:

—Ի՞նչ էլ ես լաւ ասում, համաձայնեց պատուէր տուողը: Յանկարծ սանդի մէջ պայծառ բոց երևեցաւ, թանձր վարդազոյն ծուխը պատեց և նորից ծծուճքի ու պրած փետուրների հոտը աշխարհ բռնեց: Երբ ծուխն անյետազաւ, ուստա-Թաթոսն աչքերը տրորեց և տեսաւ, որ նա ոչ առաջուց օւստա-Թաթոսն է, ոչ էլ կօշկակար, այլ մի ուրիշ մարդ, ժիլետով ու ոսկէ շղթայով, նոր շալուարով, նստած է բազկաթոռի վրայ: առաջն էլ մի մեծ սեղան բաց արած: Երկու առօր-փառօր ծառայ կերակուրներ էին հրամցնում, խորը գըլուխ տալիս ու ասում.

—Անուշ արէք, անուշ-մարսական, ձերդ բարեծննդութիւն:

Ի՞նչ առատութիւն: Ծառաները բերեցին մի մեծ կտոր տապակած ոչխարի միս, մի մեծ աման թթու դրած վարունգ էլ հեռը, յետոյ բերին մի ամբողջ տապակած սագ, մի քիչ յետոյ քիւֆտա, լաւ խորոված, նոնով ու պղպեղով չքաստուրմա դրած: Եւ ինչպէս էլ լաւ է, ազավարի, կատարեալ ռօ-լիտիք ա: Ուստա-Թաթոսն ուտում ու ամեն-մի տեսակի վրայ էլ մի երկու բաժակ պատուական զինի խմում. հեռուից նայողը կկարծէր թէ նա իսկի մեր ուստա-Թաթոսը չէ, այլ ո՞վ գիտէ որ իշխանն է կամ կոմսը: Խորովածից յետոյ բերեցին վայրի խզի կողերից պատրաստած կորկոտը, իւզն երեսին ծք-փալիս: Ի՞նչ բան էր: Յետոյ բերին փլաւ. բայց ի՞նչ փլաւ. տակին ձուածեղ երկու մատի հաստութեամբ, վրէն զղաբու, էլ ինչ ասէք չկար մէջը: Նա ուտում էր ու զմայլում: Ի՞նչ բան կայ: Բերեցին գաթա, միջի հասը բերնումը հալում էր հալում. ի՞նչբան էլ անուշ էր: Այդ քիչ էր, հետն էլ մի մեծ աման ռմբա-

բառ) «Ինչպէս չեն տրաբւում այդ աղա-հարուստներն այդքան ուսելուց» մտածում էր նա և էլի ուտում: Ամենից վերջը բերին մեզր ու կարագ: Ճաշից յետոյ եկաւ ինքը սառանան, կապոյտ ակնոցներ դրած ու խորը գլուխ տալով, հարցրեց:

—Գո՛հ էք ճաշից, Թաթոս Եգորիչ:

Բայց ուստա Թաթոսը մի խօսք անգամ չկարողացաւ ասել, մինչ այն աստիճան ծանրագել էր ճաշից: Կերել էր անչափ, որ այժմ անհաստեղ էր, ծանր. և որպէս զի փոքր ինչ զրադուէր կողմնակի բաներով, սկսեց իւր ձախ ոտքի կօշիկը տնտղել:

—Սյս տեսակ կօշիկների համար. ես եօթ մանէթ ու կիսից պակաս չէի առնում: Ո՛վ է կարել այս կօշիկները, — հարցրեց նա:

—Բձռ-Մաթոսը, պատասխանեց ծառան:

—Կանչել այն աւանակին:

Շուտով եկաւ Գիւմրըցի ուստա քեռւ-Մաթոսը: Նա ձեռները կրծքին դրած կանգնեց դռան առաջին և հարցրեց.

—Ի՛նչ կհարմայէք, ձերդ բարեծննդուծիւն:

—Չայնդ կարի՛ր, գոռաց Թաթոս Եգորիչն ու ոտքը զետին խփեց: Չհամարձակուես դիտիցդ դուրս տալ և մոռանալ թէ ո՞վ ես. կօշկակար ես չափդ ճանաչիր: Հայրման: Դու կօշիկ կարել էլ չգիտես: Քիթ ու պռունկդ ջարդել կտամ, գիտե՛ս թէ չէ: Ինչո՛ւ եկար. ի՛նչ ես ուզում:

—Եկայ կօշիկների վարձն ստանամ:

—Ի՛նչ վարձ, ի՛նչ փող ես ուզում: Դէ, դուրս կորիր: Շաբաթ օրն արի: Սյ տղայ, վզակոթին տուէք, դուրս արէք:

Բայց իսկոյն նա յիշեց, թէ ինչ օյիններ էին խաղում պատուէր առնողներն և իւր գլխին և սիրտը պղտորուեցաւ: Եւ որպէս զի մի բանով զուարճանայ, գրպանից հանեց հաստ, լիքը-տուգած քսակը և սկսեց իւր փողերը համրել: Փողն անչափ էր, բայց ուստա-Թաթոսն ուզում էր էլ ունենալ: Կապոյտ ակնոցներով սառանան նորա համար մի ուրիշ քսակ էլ բերեց, որ աւելի հաստ ու տուգած էր, բայց նա էլի էր ուզում և որքան շատ էր համրում, այնքան աւելի էր անբաւական մնում:

Երեկոյեան սատանան բերեց նորա մօտ մի բարձրահասակ, լիքը կրծքով, կաս կարմիր հագած մի տիկին և ասաց, որ իւր նոր կինն է: Նա անդադար համբուրում էր նորա հետ և շաքարեղէն ուտում: Իսկ գիշերը պառկած էր փափուկ, բըմ-

բուլէ ներքնակի վրայ, անդադար մի կողքեց միւսն էր շուռ գալիս և աչքը չէր կարողանում խփել: Մտատանջութեան մէջ էր ընկել:

—Փողներս շատ է, ասում էր նա կնոջը, չլինի գողերը, յանկարծ գան ու տանեն: Մի վեր կաց ճրագ վառիր, տես:

Ամբողջ գիշերը նա չկարողացաւ ընել. անդադար վեր էր կենում, նայում տեսնէր սնդուկը տեղն է կամ չէն կտորել: Առաւօտեան դէմ պէտք է գնար եկեղեցի՝ առաւօտեան-ժամ լսէր: Եկեղեցում ամենքն էլ համահաւասար պատիւ ունիր՝ թէ հարուստ, թէ աղքատ: Երբ որ ուստա Թաթոսն աղքատ էր, նա միշտ եկեղեցում աղօթում էր Վասուած, ներիր ինձ մեղաւորիս: Նոյնն էր ասում և այժմ, երբ հարստացել էր: Ուրեմն էլ ի՞նչ զանազանութիւն: Իսկ մահից յետոյ հարուստ Թաթոս Եզորիչին չէն թաղել ո՛չ ոսկու, ոչ ադամանդի մէջ, այլ նոյն սև հողի մէջ, ինչպէս և ամենավերջին աղքատին: Հարուստ Թաթոսն էլ նոյն կրակի մէջ պիտի տապակուի, ինչպէս և կոշկակարները: Այս բոլորը շատ վիրաւորական էր թուում ուստա-Թաթոսին, այն ինչ երեկուայ ճաշը դեռ ծանրացած էր վըրան և աղօթքի փոխարէն, զօռով-զօռով զանապան մտքեր են պտտում գլխում փողով լիքը սնդուկի, գողերի, իւր ծախած, կորցրած հոգու մասին:

Եկեղեցուց բարկացած դուրս եկաւ: Որպէսդի սիրտը մի քիչ թեթեւացնի, նա, ինչպէս առաջ էլ շատ անգամ սովորութիւն ունէր, ձէնը գլուխը ձգեց և սկսեց երգել: Բայց հէնց որ սկսեց՝ բողբոջապահ մտեցաւ վաղելով և յարգանքով ասաց.

—Պարոն, աղաներին արգելուած է փողոցում երգել: Դուք կօշկակար չէք:

Ուստա-Թաթոսը մէջքը պատին տուեց և սկսեց մտածել.—ինչո՞վ զուարճանայ:

—Աղա-ջան, գոռաց դռնապանը. պատին շատ մի զօռիր, բուրբոջ խարաբ կեղնի:

Ուստա-Թաթոսը մտաւ շոյֆէն, դուրս կանչեց շոյաւուր-զօռուէն, առաջը ձգեց ու սկսեց ածել տալով փողոցի մէջ տեղով գնալ: Բոլոր անցորդները կանգնում, մատնացոյց էին անում նորան և ծիծաղում:

—Անունն էլ դեռ աղա է, հեգնում էին կառապանները: Կարծես կօշկակարի մէկը լինի...

—Մի՛թէ ներելի է, որ աղա-մարգիկ անկարգութիւններ

անեն, ասաց նորան մի ուրիշ բաղաբապաս.— Գոնէ զինետուն
գնալիք:

Պարոն, ողորմութիւն արէք, ի սէր Քրիստոսի, ազերսում
էին աղբատ— ուրագիկներն ամեն կողմից շրջապատելով ուս-
տա-Թաթոսին: Գթացէք, ողորմութիւն տուէք:

Ասաջ, երբ նա կօշկակար էր, աղբատները ոչ միայն ու-
շադրութիւն չէին դարձնում, այլ վրան էլ չէին նայում, իսկ
այժմ ճանապարհ չէին տալիս, որ անցնէ:

Իսկ տանը դիմաւորեց նորան նոր կինը, Տագած կանաչ
կրկնոց և կարմիր շրջագոգեստ: Նա կամեցաւ փայլալայլ նորան
իւր առաջուայ ձևով՝ այն է ձեռքը բարձրացրել էր, որ մի եր-
կու Տացնէ մէջքին, բայց նա բարկացած գոռաց.

— Բո՛ի զիւղագի: Անկիրթ, կոպիտ: Չես էլ իմանում թէ
տիկիներն ճիշտ ինչպէս պէտք է վարուել: Թէ որ սիրում ես,
արի ձեռքս Տամբուրի, իսկ ձեռքերդ քեզ քաշիր.

Ը՛հ, Աստուած կտրի այսպէս կեանքը. կեանք ու ապ-
րուստ խօմ չէ, դժոխքի պատիժ է, — մտածում էր ուստա-
Թաթոսը: Ընս էլ կեանք է էլի, մարդիկ էլ պիտի ասեն ապ-
րում ենք էլի՛: Ոչ կարող ես ուղածդ ժամանակ երգել, ոչ
կարող ես դաւուլ— զուռնով քէֆ անել, ոչ կարող ես կնոջն սի-
րել՝ մի երկու Տացնել... Թե՛ր...

Հէնց նոր էր նստել իւր տիկնոջ ճիւղ մի բաժակ թէյ
խմելու, որ կապոյտ ակնոցներով սատանան էլի մէջ տեղ եկաւ
և ասաց.

— Դէ՛հ, Թաթոս Եգորիչ, ինչ որ իմ պարտքս էր, ես բո-
լորը մէկ մէկ կատարեցի: Հիմա նեղութիւն քաշեցէք թուղթն
ստորագրելու և յետևիցս գալու, ուր կերթամ: Այժմ դուք
շատ լաւ գիտէք, թէ ի՞նչ է նշանակում շոյլ կեանք վարել-
այդքան էլ բաւական է քեզ Տամար:

Եւ քաշ տուեց խեղճ ուստա-Թաթոսին դժոխք, ուղղակի
Տրեց ձգեց էրման-կրակի մէջ. իսկ սատանաները չորս կողմից
դուրս թափուեցան, գլխին կիտուեցան և գոռում գոչում էին:
Դժոխքի մէջ նախաճաշոն աշխարհ էր բռնել, այնպէս որ
քիչ էր մնում մարդ խեղտուէր:

Եւ յանկարծ ամեն ինչ լքեցաւ: Ուստա-Թաթոսն աչ-
քերը բաց արեց և տեսաւ իւր սեղանը, կօշիկները և թիթե-
ղեայ լամպարը, լամպարի ապակին սևացել, սև մուր էր կտրել,
իսկ պատրոյզի առկայծող կրակը մի գարշահոտ մուր

էր արձակում, որ կարծես ծինելոյզից ելնելիս լինէր: Նորագլխակները կանգնած էր կապոյտ ակնոցներով պատուէր տուողը և բարկացած գորգուում էր.

Ես բեզ ցոյց կտամ, անզգամ: Երկու շաբաթ առաջ պատուէր ես ընդունում, իսկ մինչև այսօր դեռ ևս կօշիկներս չես պատրաստել: Դու կարծում ես որ շատ ժամանակ ունիմ օրը մի հինգ անգամ բեզ մօտ դամ:

Ուստա-Թաթոսը գլուխը թափահարեց և կօշիկները նորից ձեռքն առաւ: Պատուէր տուողը դեռ երկար ժամանակ հայհոյում և սպառնում էր: Երբ որ նա, վերջապէս, հանգստացաւ, ուստա Թաթոսը սառը-սառը հարցրեց.

— Իսկ ի՞նչ գործով էք զբաղւում դուք, պարոն:

— Ես բնագլխան կրակ ու հրթիռներ եմ պատրաստում: Ի՞նչ ես աչքերդ չոնել, վրէս նայում, չհասկացմբ: Քրշանգգի եմ. հասկացմբ հիմա:

Առաւօտեան ժամի զանգերը խփեցին: Ուստա-Թաթոսը կօշիկները յանձնեց, փողերն ստացաւ և եկեղեցի գնաց:

Փողոցով շարունակ անց ու գարձ էին անում կառքեր և սահակներ: Սալայատակով հասարակ ժողովրդի հետ խառն գնում էին վաճառականներ, կրթուած մարդիկ, զինուորականներ... Բայց ուստա-Թաթոսն այլ ևս չէր նախանձում ուրիշներին և չէր տրանջում իւր վիճակից: Այժմ նորան այնպէս էր թւում թէ և հարուստների և թէ աղքատների համար հաւասարապէս անմխիթար վիճակ է: Ոմանք հնարաւորութիւն ունեն կառքերով պտտել, ուրիշները քէֆներն ուղածի չափ երգել և զուարճանալ, իսկ ընդհանրապէս ամենքին սպասում է միևնոյն գերեզմանը և կեանքի մէջ մի այնպիսի զրաւիչ բան չէր գտնում, որի համար արժէր, որ սատանային ծախէր իւր հոգու ամենաչնչին մասն անգամ:

Ազատ բարգ. ՄԵԼԻՔ